ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

ք. Մեղրի, Զորավար Անդրանիկի 2
Հեռախոս (0286)4-34-23

Թիվ 1093
*29 ՕԳՈՍՏՈՍԻ 2017թ.*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ
ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հակոբյան

Ձեզ է ներկայացվում Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2017 թվականի օգոստոսի 24-ի N77-Ա, N78-Ա, N79-Ն, N 80-Ա որոշումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ

Կատ՝ Ս Հակոբյան

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

№ 8638
05 09 2017 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 - օգոստոսի 2017 թվական N 80- Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-Ի N 26-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-8, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 17-ի «Մեղրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու և հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին» N26-Ա որոշման հավելվածում «Թինա Բաղդասարյան» բառերը փոխարինել «Իսկուհի Վարդանյան» բառերով:

Կողմ (8) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԶԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2017թ. օգոստոսի 24
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24-օգոստոսի 2017 թվական N 79- Ն

## ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի «ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 61-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70 հոդվածի 5-րդ մասով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-8, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

**որոշում է՝**

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 27-ի «ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 61-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները,
1)Որոշման 2-րդ կետի 1-ին հատվածում (համայնքի բյուջեի եկամուտները՝ ըստ առանձին եկամտատեսակների) կատարել փոփոխություններ և լրացումներ համաձայն հավելված 1-ի:
2)Որոշման 3-րդ կետի 2-րդ հատվածում (համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման) կատարել փոփոխություններ և լրացումներ համաձայն հավելված 2-ի:
3)Որոշման 4-րդ կետի 3-րդ հատվածում (համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման) կատարել փոփոխություններ և լրացումներ համաձայն հավելված 3-ի:
4)Որոշման 7-րդ կետի 6-րդ հատվածում (համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման) կատարել փոփոխություններ և լրացումներ համաձայն հավելված 4-ի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ (8) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԶԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2017թ. օգոստոսի 24
ք. Մեղրի

Հավելված N1
ՀՀ Սյունիքի մարզի
Մեղրի համայնքի ավագանու
2017 թվականի օգոստոսի 24-ի N 79-Ն որոշման

ՀԱՎԵԼՎԱԾ 1
ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

# 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի <<ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 61-Ն ՈՐՈՇՄԱՆ 1-ԻՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

հազ.դրամ

| Տողի N | Եկամտատեսակները | Հոդվածի NN | Ընդամենը (ս.5+ս.6) | այդ թվում | |
|---|---|---|---|---|---|
| | | | | վարչական մաս | ֆոնդային մաս |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1381 | կապիտալ դրամաշնորհներ | | 6270,0 | x | 6270,0 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ

Հավելված N2
ՀՀ Սյունիքի մարզի
Մեղրի համայնքի ավագանու
2017 թվականի օգոստոսի 24-ի N 79 Ն_ որոշման

ՀԱՎԵԼՎԱԾ 2
ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ
ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

## 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի <<ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 61-Ն ՈՐՈՇՄԱՆ 2-ՐԴ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

հազ.դրամ

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները | Ընդամենը (ս 7+ս 8) | այդ թվում՝ վարչական բյուջե | այդ թվում՝ ֆոնդային բյուջե |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 2111 | 1 | 1 | 1 | Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում | 7570.0 | -2150.0 | 9720 0 |
| 2161 | 1 | 6 | 1 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող) | -2025.0 | 6575.0 | 8600 0 |
| 2451 | 4 | 5 | 1 | Ճանապարհային տրանսպորտ | 150.0 | -5000 0 | 5150.0 |
| 2511 | 5 | 1 | 1 | Աղբահանում | -20000.0 | -20000.0 | 0 0 |
| 2641 | 6 | 4 | 1 | Փողոցների լուսավորում | 5002.85 | 5002.85 | 0,0 |
| 2911 | 9 | 1 | 1 | Նախադպրոցական կրթություն | 10572 15 | 10572 15 | 0 0 |
| 3071 | 10 | 7 | 1 | Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) | 5000.0 | 5000.0 | 0.0 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ

Հավելված N3
ՀՀ Սյունիքի մարզի
Մեղրի համայնքի ավագանու
2017 թվականի օգոստոսի 24-ի N 79-Ն որոշման

ՀԱՏՎԱԾ 3
ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ
ԾԱԽՍԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

# 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի <<ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 61-Ն ՈՐՈՇՄԱՆ 3-ՐԴ ՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

**հազ.դրամ**

| Տողի NN | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | NN | Ընդամենը (ս 5+ս.6) | այդ թվում | |
|---|---|---|---|---|---|
| | | | | վարչական մաս | ֆոնդային մաս |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 4221 | - Ներքին գործուղումներ | 4221 | -500.0 | -500.0 | x |
| 4238 | - Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 4239 | -5000.0 | -5000.0 | x |
| 4252 | - Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում | 4252 | -1000.0 | -1000.0 | x |
| 4264 | - Տրանսպորտային նյութեր | 4264 | -450.0 | -450.0 | x |
| 4268 | - Հատուկ նպատակային այլ նյութեր | 4269 | 11377.85 | 11377.85 | x |
| 4531 | - Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին | 4637 | -20000.0 | -20000.0 | x |
| 4543 | - Այլ կապիտալ դրամաշնորհներ | 4657 | 10572.15 | 10572.15 | x |
| 4634 | - Այլ նպաստներ բյուջեից | 4729 | 5000.0 | 5000.0 | x |
| 5112 | - Շենքերի և շինությունների կառուցում | 5112 | -8600.0 | x | -8600.0 |
| 5113 | - Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 5113 | 9020.0 | x | 9020.0 |
| 5134 | - Նախագծահետազոտական ծախսեր | 5134 | 5850.0 | x | 5850.0 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ

Հավելված N4
ՀՀ Սյունիքի մարզի
Մեղրի համայնքի ավագանու
2017 թվականի օգոստոսի 24-ի N 79Ն որոշման

ՀԱՏՎԱԾ 6
ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ
ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

## 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի <<ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 61-Ն ՈՐՈՇՄԱՆ 6-ՐԴ ՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

հազ դրամ

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի, դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | Տնտեսա-գիտական դասակարգ ման հոդված | Ընդամենը (ս.8+ս 9) | այդ թվում | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 2111 | 1 | 1 | 1 | - Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում | | 7570.0 | -2150 0 | 9720.0 |
| | | | | - Ներքին գործուղումներ | 4221 | -500.0 | -500.0 | 0 0 |
| | | | | - Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում | 4252 | -1000.0 | -1000.0 | 0 0 |
| | | | | - Տրանսպորտային նյութեր | 4264 | -650.0 | -650 0 | 0.0 |
| | | | | - Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 5113 | 9020.0 | 0 0 | 9020.0 |
| | | | | - Նախագծահետազոտական ծախսեր | 5134 | 700.0 | 0.0 | 700 0 |
| 2161 | 1 | 6 | 1 | - Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող) | | -2025 0 | 6575 0 | -8600 0 |
| | | | | - Տրանսպորտային նյութեր | 4264 | 200.0 | 200.0 | 0 0 |
| | | | | - Հատուկ նպատակային այլ նյութեր | 4269 | 6375.0 | 6375.0 | 0.0 |
| | | | | - Շենքերի և շինությունների կառուցում | 5112 | -8600.0 | 0 0 | -8600 0 |
| 2451 | 4 | 5 | 1 | - Ճանապարհային տրանսպորտ | | 150 0 | -5000.0 | 5150.0 |
| | | | | - Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 4239 | -5000.0 | -5000.0 | 0.0 |
| | | | | - Նախագծահետազոտական ծախսեր | 5134 | 5150.0 | 0.0 | 5150.0 |
| 2511 | 5 | 1 | 1 | - Աղբահանում | | -20000 0 | -20000 0 | 0.0 |
| | | | | - Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին | 4637 | -20000.0 | -20000 0 | 0 0 |
| 2641 | 6 | 4 | 1 | Փողոցների լուսավորում | | 5002 85 | 5002.85 | 0 0 |
| | | | | - Հատուկ նպատակային այլ նյութեր | 4269 | 5002.85 | 5002 85 | 0 0 |
| 2911 | 9 | 1 | 1 | - Նախադպրոցական կրթություն | | 10572.15 | 10572.15 | 0.0 |
| | | | | - Այլ կապիտալ դրամաշնորհներ | 4657 | 10572.15 | 10572 15 | 0 0 |
| 3071 | 10 | 7 | 1 | Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) | | 5000.0 | 5000.0 | 0 0 |
| | | | | - Այլ նպաստներ բյուջեից | 4729 | 5000.0 | 5000 0 | 0.0 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**
**ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

---

ՈՐՈՇՈՒՄ

24 օգոստոսի 2017 թվական N 78- Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ 2018Թ. ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով,<<Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 26-ի << ՀՀ կառավարության որոշումը տեղական ինքնակառավարման մարմինների կողմից առաջարկվող բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսավորման համամասնությունները ու <<Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին>> ՀՀ օրենքի 3 հոդվածի համաձայն հաստատված և առաջիկա տարվա պետական բյուջեով նախատեսված ծրագրում համայնքի ավագանու կողմից առաջարկվող փոփոխությունները ՀՀ Բնապահպանության նախարարության ու ՀՀ առողջապահության նախարարության հետ համաձայնեցնելու կարգերը հաստատելու մասին>> N 1544-Ն որոշման, ՀՀ վարչապետի 2016թ. Դեկտեմբերի 29-ի N 1256-Ա որոշման, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-8, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Հաստատել Մեղրի համայնքի շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանման 2018 թվականի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2.Ծրագրի ֆինանսավորման համար առաջիկա տարվա պետական բյուջեի նախագծում հատկացումներ նախատեսելու հարցը քննարկման առարկա դարձնելու նպատակով նշված ծրագիրը առաջիկա տարվա բյուջետային ֆինանսավորման հայտերի ներկայացման համար ՀՀ տարածքային կառավարման մարմնի միջոցով ներկայացնել ՀՀ բնապահպանության նախարարություն:

| | | |
|---|---|---|
| Կողմ (8) | Դեմ(0) | Ձեռնպահ(0) |
| ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ | | |

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ՋԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՋԱՔԱՐՅԱՆ

2017թ. օգոստոսի 24
ք. Մեղրի

Հավելված
Մեղրի համայնքի ավագանու
2017թ. օգոստոսի 24-ի N 78-Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

## ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

# ԾՐԱԳԻՐ

## ՄԵՂՐԻ ԵՎ ԱԳԱՐԱԿ ՔԱՂԱՔՆԵՐԻ, ԿԱՐՃԵՎԱՆ, ԿՈՒՐԻՍ, ԳՈՒԴԵՄՆԻՍ ԳՅՈՒՂԵՐԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ

Մեղրի-2017թ.

# ՆԱԽԱԲԱՆ

«Մեղրի և Ագարակ քաղաքների, Կարճևան, Կուրիս, Գուդեմնիս գյուղերի շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանման» 2018թ. ծրագիրը կազմվել է «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (15.05.2001թ., ՀՕ-188) և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 26-ի «Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից առաջարկվող բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսավորման համամասնությունները Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության հետ համաձայնեցնելու կարգը հաստատելու մասին» N 1544-Ն որոշման պահանջներին համապատասխան:

## I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ծրագրի առաջնայնությունները սահմանել ենք.

- հաշվի առնելով համայնքի և շրջակա տարածքների վրա լեռնահանքային արդյունաբերության բացասական ազդեցությունը.
- համոզված լինելով, որ հնարավոր չէ համայնքի կայուն զարգացումը առանց բնապահպանական բաղադրիչի.
- գիտակցելով մարդու լիարժեք կենսագործունեության համար էկոլոգիական անվտանգության ապահովման կարևորությունը.
- գիտակցելով էկոլոգիական կրթության և դաստիարակության կարևորությունը համայնքի կայուն զարգացումն ապահովող գործընթացում.
- կարևորելով բնապահպանական ծրագրերի շարունակական, ամբողջական և համընդգրկուն լինելը.
- տեղյակ լինելով «Շրջակա միջավայրի պահպանության գործողությունների» և «Շրջակա միջավայրի հիգիենայի բնագավառում գործողությունների» ազգային ծրագրերի դրույթներին և բնապահպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության ունեցած միջազգային պարտավորություններին:

ծրագրերի դրույթներին և բնապահպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության ունեցած միջազգային պարտավորություններին:

## II. ԾՐԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ծրագիրը նպատակ ունի 2001թ. մայիսի 15-ին ընդունված «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով մեր համայնքին հատկացվող գումարներով, համայնքապետարանի սեփական միջոցներով, արտասահմանյան դոնոր կազմակերպությունների դրամաշնորհներով, միջազգային բնապահպանական հիմնադրամների միջոցներով և վարկերով նպաստել համայնքի բնապահպանական և առողջապահական խնդիրներին:

Ծրագիրը ներառում է.

1. Մեղրի համայնքի Մեղրի և Ագարակ քաղաքների, Կարճևան, Կուրիս, Գուդեմնիս գյուղերի անտառային, ջրային և օդային տարածքների, ինչպես նաև բուսական և կենդանական աշխարհի պահպանման ու վերականգնման միջոցառումներ:

2. Համայնքի բնակչության առողջության պահպանմանը նպատակաուղղված միջոցառումներ, որոնց անհրաժեշտությունը պայմանավորված է «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի գործունեությամբ:

### **ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ**

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՀԱՎԵԼՅԱԼ ՍՆՈՒՆԴՈՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Նախադպրոցական տարիքի երեխաներին հավելյալ սնունդով ապահովում.

Մեղրի համայնքում գործում են «Մեղրի համայնքի մանկապարտեզ» (ք. Մեղրի) և «Ագարակի մանկապարտեզ» (ք. Ագարակ) ՀՈԱԿ-ները: «Ագարակի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ն ունի մասնաճյուղ Կարճևան գյուղում, որտեղ հաճախում են նաև Կուրիս և Գուդեմնիս գյուղերում բնակվող երեխաները: Մեղրի համայնքում մանկապարտեզներ հաճախում են ամսական միջինը 436 երեխա: Մանկապարտեզները պարտավորված են

աշխատել շուրջ տարին, քանի որ բացի համայնքաբնակ երեխաներից, մանկապարտեզներ հաճախում են նաև մաքսատանը, զորամասում, Պ/Մ կոմբինատում և մասնավոր շինությունների վրա աշխատելու համար Մեղրի տեղափոխված քաղաքացիների երեխաները:

Հետևաբար անհրաժեշտ է նախադպրոցական տարիքում գտնվող երեխաների առողջության պահպանման, նրանց դիմադրողականության բարձրացման նպատակով իրականացնել համապատասխան միջոցառումներ, այն է՝ օժանդակություն «Մեղրի համայնքի մանկապարտեզ» և «Ագարակի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ներին՝ նախադպրոցական տարիքի երեխաներին կալորիայով և վիտամիններով հարուստ հավելյալ սնունդով ապահովում:

**Ակնկալվող արդյունք**

❖ Նախադպրոցական տարիքի երեխաների առողջության բարելավում

## ԱՄՓՈՓՈՒՄ

Ծրագրի իրականացումը թույլ կտա ապահովել իրականացված բնապահպանական ծրագրերի անընդհատությունը և շարունակականությունը, կբարձրացնի կատարված հետազոտությունների արդյունավետությունը և հիմնավոր բազա կստեղծի համայնքի կայուն զարգացման համար՝ հետագա իրատեսական ծրագրերի ստեղծման և արդյունավետորեն իրականացնելու համար:

Ծրագիրը կնպաստի նաև համայնքային և պետության կողմից տրամադրվող միջոցների, Հայաստանի Հանրապետությունում գրանցված միջազգային, հումանիտար, ոչ կառավարական և այլ կազմակերպությունների հնարավորությունների առավել նպատակային և արդյունավետ օգտագործմանը՝ համայնքի բնակչության կյանքի համար առողջ միջավայր ստեղծելու, բնության կենսաբազմազանության պահպանման նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՆԱԽԱՀԱՇԻՎ 1254,3 (մեկ միլիոն երկու հարյուր հիսունչորս հազար երեք հարյուր ) ՀՀ ԴՐԱՄ ԳՈՒՄԱՐՈՎ

ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ____________ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

# ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Ագարակի մանկապարտեզ» և «Մեղրի համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ների Ագարակ և Մեղրի քաղաքների, Կարճևան, Կուրիս, Գուդեմնիս գյուղերի 2018 թ. բնապահպանական և առողջապահական միջոցառումների

| | ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՀԱՎԵԼՅԱԼ ՍՆՈՒՆԴՈՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ | կատարման ժամկետը | չափի միավորը | միավորի արժեքը հազ. դր. | քանակը | ընդհանուր գումար հազ. դր. |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Տավարի միս | 2018թ. | կգ | 2,8 | 255 | 714,0 |
| 2 | Թռչնամիս | | կգ | 1,7 | 201,1 | 341,9 |
| ԸՆԴԱՄԵՆԸ «ԱԳԱՐԱԿԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ | | | | | | **1055,9** |
| 1 | Տավարի միս | 2018թ. | կգ | 2,8 | 45 | 126,0 |
| 2 | Թռչնամիս | | կգ | 1,7 | 42,6 | 72,4 |
| ԸՆԴԱՄԵՆԸ «ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ | | | | | | **198,4** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | | | | **1254,3** |

Ծանոթություն*
Կարճևանում գործում է «Ագարակի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի մասնաճյուղը, որտեղ հաճախում են նաև Կուրիս և Գուդեմնիս գյուղերում բնակվող երեխաները:

«ԱԳԱՐԱԿԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-ի ՏՆՕՐԵՆ՝ Ա. Կարապետյան

ՀԱՇՎԱՊԱՀ՝ Ա. Մարգարյան

«ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-ի ՏՆՕՐԵՆ՝ Ս. Սարգսյան

ՀԱՇՎԱՊԱՀ՝ Ս. Գրիգորյան

## ԾՐԱԳԻՐ

**ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԳԱՐԱԿ ԵՎ ՄԵՂՐԻ ՔԱՂԱՔՆԵՐԻ, ԿԱՐՃԵՎԱՆ, ԿՈՒՐԻՍ, ԳՈՒԴԵՄՆԻՍ ԳՅՈՒՂԵՐԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ**

**2018թ.**

| | Ծրագրի ոլորտը և միջոցառումների անվանումները | Միջոցառումների հիմնական ցուցանիշները | | | | | Ակնկալվող արդյունքներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | կատարման ժամկետը | չափի միավորը | միավորի արժեքը հազ դր | քանակը | ընդհանուր գումար հազ դր | |
| | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 11 |
| I | ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՀԱՎԵԼՅԱԼ ՍՆՈՒՆԴՈՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ | 1-4-րդ եռ. | | | | **1254,3** | Նախադպրոցական տարիքի երեխաների առողջության բարելավում /436 երեխա, որից 208-ը հաճախում է <<Մեղրի համայնքի մանկապարտեզ>>, իսկ 228-ը <<Ագարակի մանկապարտեզ>> |
| | Նախադպրոցական տարիքի երեխաների հավելյալ սնունդ | | | | | 1254,3 | |
| | | | | | | | |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | **1254,3** | |

| N | Միջոցառման անվանումը | Գումար / հազ դրամ/ | Համամասնություն % |
|---|---|---|---|
| | ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՀԱՎԵԼՅԱԼ ՍՆՈՒՆԴՈՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ /ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ-ՄԵՂՐԻ, ԱԳԱՐԱԿ, ԿՈՒՐԻՍ, ԳՈՒԴԵՄՆԻՍ, ԿԱՐՃԵՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐ/ | 1254,3 | 100 |

ՂԵԿԱՎԱՐ Մ ԶԱՔԱՐՅԱՆ

Համաձայնեցված է

...պահպանության նախարար

Ա. Մինասյան

» 2017թ.

Հավելված

Մեղրի համայնքի 2018թ.

բնապահպանական ծրագրի

**Մեղրի համայնքի 2018 թվականի բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսավորման համամասնությունները**

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

[illegible]

« » 2018թ.

ՀԱՎԵԼՎԱԾ

Մեղրի համայնքի 2018 թվականի շրջակա

միջավայրի և բնակչության առողջության

պահպանման ծրագրի

# ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ու Մ

24 օգոստոսի 2017 թվական N 77-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 24 - Ի N 14 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ և 17-րդ հոդվածներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-8 , դեմ-0, ձեռնպահ-0 , Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2017 թվականի օգոստոսի 24 -ի N 14 արտահերթ նիստի օրակարգը՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանման 2018թ. ծրագրի հաստատման մասին:

2. ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 27-ի «ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 61-Ն որոշման մեջ փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին:

3. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 17-ի N26-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

Կողմ (8) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԶԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ [illegible]
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ [illegible]
ՄԻՔԱԵԼՅԱՆ [illegible]

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ